«ԱՇԽԱՏԱՆՔԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԾՐԱԳԻՐ

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ««ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ

ՆԱՄԱԿ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ
Ծրագրի՝ 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ

Հունիս, 2024
Երևան

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

Նամակ ղեկավարությանը Ծրագրի՝ 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ

Ներկայացվում է «Աշխատանքի էլեկտրոնային բորսա» ծրագրի («Ծրագիր») ղեկավարությանը,

Մենք աուդիտի ենք ենթարկել «Աշխատանքի էլեկտրոնային բորսա» ծրագրի (որը ֆինանսավորվում է Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի («ԿԶԵՀ») կողմից՝ 2022 թվականի մարտի 14-ին ստորագրված Դրամաշնորհի տրամադրման մասին համաձայնագրի համաձայն («Դրամաշնորհի մասին համաձայնագիր»)) («Ծրագիր»)՝ 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է արտահայտել կարծիք՝ նշված հաշվետվությունների՝ *«Ֆինանսական Հաշվետվություններ Հաշվապահական Հաշվառման Դրամարկղային ի Սկզբունքով»* Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի համապատասխան պատրաստման վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը :

Այդ նպատակով, նաև ձեռք ենք բերել աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր մշակելու նպատակով, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

Ընթացիկ աուդիտի ընթացքում մենք չենք բացահայտել այնպիսի հարցեր, որոնց վրա կցանկանայինք հրավիրել Ծրագրի ղեկավարության ուշադրությունը:

Շնորհակալություն ենք հայտնում համագործակցության և աուդիտին օժանդակելու համար:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

26 հունիսի 2024թ.